



Ադրբեջանի պաշտոնական շրջանակները մտահոգ և զայրացած են, որ իրենց չի հաջողվել խանգարել Թուրքիայի և Հայաստանի միջև Վան-Երևան ուղիղ չվերթի գործարկմանը:

Ինչպես հաղորդում են ադրբեջանական ՋԼՄ-ները, Ադրբեջանի նախագահի աշխատակազմի հասարակական-քաղաքական հարցերի բաժնի պետ Ալի Հասանովը ապրիլի 3-ից Վան-Երևան-Վան չվերթները սկսվելու կապակցությամբ հայտարարել է, թե «Անկարան այդ կերպ աջակցում է մի երկրի, որը շարունակում է բռնազավթված պահել ադրբեջանական հողերը»:

Հասանովը չի թաքցրել պաշտոնական Բաքվի այն մտահոգությունը, որ «եղբայրական Թուրքիան հարաբերություններ է ստեղծում Հայաստանի հետ»: «Մենք կրկնակի խանդով ենք վերաբերվում, երբ Հայաստանի հետ կապերը խորացնում են այն երկրները, որոնց հետ մենք բարեկամական եւ ռազմավարական հարաբերություններ ունենք», -ասել է նա:

Վան-Երևան-Վան չվերթները իրականություն են դառնում «Նարեկավանք տուր» զբոսաշրջային ընկերության ու Հայաստանի գործարարների և արդյունաբերողների միության ջանքերով: Չվերթներն ապրիլի 3-ից կիրառործվեն թուրքական «Բորա ջեթ» ավիաուղիների ինքնաթիռներով:

Գրել է armenians.hu

Երկուշաբթի, 25 Մարտ 2013 09:32

---

Թուրքիան, որն առաջիններից մեկն էր ճանաչել Հայաստանի Հանրապետության անկախությունը, դարաբաղյան պատերազմում Ադրբեջանին աջակցելու նպատակով 1993 թ-ից փակել է Հայաստանի հետ սահմանը եւ մինչ օրս դիվանագիտական հարաբերություններ չի ստեղծել Երևանի հետ: